ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2014 թվականի թիվ 89- Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թ. հուլիսի 7-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին> N 612- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի՝

1) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 70-2.3-25) անձնագիրը, (Հավելված).

2) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-25/ անձնագրի՝ 11-րդ կետի «բ» ենթակետից հետո ավելացնել նոր« բ¹»ենթակետ.

« բ¹/ իրականացնում է ՀՀ պետական բյուջեով կրթական ծրագրերով մարզին հատկացված միջոցների հաշիվների սպասարկումը.».

3) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-26/ անձնագրի 11-րդ կետի «բ» ենթակետից հետո ավելացնել նոր« բ¹»ենթակետ.

« բ¹/ իրականացնում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից տարբեր ծրագրերով հատկացված միջոցների հաշիվների սպասարկումը.».

4) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-27/ անձնագրի 11-րդ կետի «բ» ենթակետից հետո ավելացնել նոր« բ¹» ենթակետ.

« բ¹/ իրականացնում է ՀՀ պետական բյուջեով մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի հաշիվների սպասարկումը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. հուլիսի 14
ք.Իջևան